ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետին առընթեր երիտասարդական խորհրդի նոր կազմը համալրելու համար հայտարարվում է մրցույթ, որը տեղի կունենա սույն թվականի հուլիսի 30-ին ժամը 14:00-ին Մարմաշեն համայնքի Մայիսյան բնակավայրի փողոց 1, շենք 29 հասցեում.

1.խորհրդի ոչ պետական հատվածը ներկայացնող անդամը 16 - 30 տարեկան երիտասարդ պետք է լինի, որը կհամապատասխանի հետևյալ չափանիշներին՝

1)երիտասարդներին առընչվող կրթական, սոցիալական, զբաղվածության, առողջապահական և մշակութային խնդիրներին տիրապետելը.

2)երիտասարդական կազմակերպություններում տարբեր ծրագրերին կամ միջոցառումներին մասնակցության փորձ.

3)երիտասարդական քաղաքականության բնագավառում միջազգային փորձի, պետական և հանրային կառավարման համակարգի, ծրագրերի մշակման, իրականացման և գնահատման առանձնահատկությունների իմացություն:

Խորհրդի ոչ պետական հատվածը ներկայացնող անդամն առաջադրվում է համայնքի ավագանու կողմից, մրցութային կարգով:

17.հուլիսի.2018 թվական

Մարմաշենի համայնքապետարան